



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 05(319) 09.03.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՎԵՑԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		
17	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը հաստատելու մասին» ԼՂՀ Նախագահի ՆԿ-2-Ն կարգադրությունը.....	3
18	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2010 թվականի մայիսի 27-ի ՆԿ-2-Ն կարգադրության մեջ լրացում կատարելու մասին» ԼՂՀ Նախագահի ՆԿ-3-Ն կարգադրությունը...	4
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
19	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 18-ի N 82-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 92-Ն որոշումը.....	5
20	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության համակարգի զարգացման ֆոնդի գումարների 2017 թվականի տարեկան ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 124-Ն որոշումը.....	6
21	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 743-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 125-Ն որոշումը.....	8
22	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 126-Ն որոշումը.....	9
23	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 127-Ն որոշումը.....	10
24	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 128-Ն որոշումը.....	11
25	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 129-Ն որոշումը.....	12
26	««Մեսրոպ Մաշտոց համալսարանի» Կովկասագիտություն մասնագիտության բակալավրի առկա և հեռակա ուսուցման վճարովի համակարգում սովորող բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 130-Ն որոշումը.....	13
ՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ		

	ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
27	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2016 թվականի մարտի 10-ի N 76-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ վարչապետի N 94-Ն որոշումը.....	15
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
28	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ N 1105/02/15թ. որոշումը.....	17
29	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ N 0003/02/14թ. որոշումը.....	30
30	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 2389/02/16թ. որոշումը և հատուկ կարծիքը.....	36

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրության 17-րդ կետի 2-րդ ենթակետը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը՝ 112 միավոր:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2015 թվականի նոյեմբերի 3-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը հաստատելու մասին» ՆԿ-10-Ն կարգադրությունը:

3. Մույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Բ.ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. փետրվարի 24
Ստեփանակերտ
ՆԿ-2-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 27-Ի ՆԿ-2-Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2010 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» ՆԿ-2-Ն կարգադրության հավելվածը լրացնել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 16.4»:

2. Մույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Բ.ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 7
Ստեփանակերտ
ՆԿ-3-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2017թ.

N 92-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 82-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***n p n շ ու մ է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 18-ի «Մշակութային և երիտասարդական միջոցառումների մասնակիցների սննդի ու գիշերավարձի օրական վճարման չափերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 13-ի թիվ 150 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 82-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին աղյուսակի 1-ին կետի 1-ին տողի 4-րդ և 6-րդ սյունակները համապատասխանաբար լրացնել «մինչև 3000» և «մինչև 8000» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴԻ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է:**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության զարգացման ֆոնդի գումարների օգտագործման ուղղությունները՝ 2017 թվականի տարեկան ծախսերի նախահաշվի ձևով՝ համաձայն հավելվածի.

2. Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ անհրաժեշտության դեպքում՝

1) սույն որոշման 1-ին կետով հաստատված նախահաշվում կատարել վերաբաշխում ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև, բայց ոչ ավելի, քան համապատասխան նախահաշվով հաստատված հատկացումների ընդհանուր ծավալի 15 տոկոսը.

2) սույն որոշման 1-ին կետով հաստատված համապատասխան նախահաշվով նախատեսված ծախսերի տարեկան ընդհանուր գումարը 2017 թվականի ընթացքում գերազանցող մուտքերի առկայության դեպքում, 2017 թվականին դրանք օգտագործել:

3. Մեկամսյա ժամկետում հաստատել սույն որոշման 1-ին կետով հաստատված նախահաշվով նախատեսված հատկացումների եռամսյակային բաշխումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
 ՀԱՄԱԿԱՐԳԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

	Ընդամենը
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	193952,5
այդ թվում՝	
Ա. ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ	121 952,5
այդ թվում՝	
1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ	40 697,5
այդ թվում՝	
1.1 ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ	
այդ թվում՝	
Աշխատողների աշխատավարձեր և հավելվածարներ	
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	40 697,5
այդ թվում՝	
<i>Պարգևատրման ֆոնդ</i>	<i>31 750,5</i>
<i>Նախարարի պահուստային ֆոնդ</i>	<i>8 947,0</i>
2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՆՔԲԵՐՈՒՄ	80 755,0
այդ թվում՝	
2.1 ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	4 528,0
Էներգետիկ ծառայություններ	1 000,0
Կոմունալ ծառայություններ	500,0
Կապի ծառայություններ	1 528,0
Գույքի և սարքավորումների վարձակալություն	1 500,0
2.2 ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	5 000,0
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	5 000,0
2.3 ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՆՔ ԲԵՐՈՒՄ	13 994,0
Վարչական ծառայություններ	2 584,0
Համակարգչային ծառայություններ	4 780,0
Տեղեկատվական ծառայություններ	1 130,0
Ներկայացուցչական ծախսեր	4 000,0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1 500,0
2.4 ԸՆԹԱՑԻՎ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ)	47 000,0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	45 000,0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2 000,0
2.5 ՆՅՈՒԹԵՐ (ԱՊՐԱՆՔՆԵՐ)	10 233,0
Գրասենյակային նյութեր և հագուստ	3 100,0
Տրանսպորտային նյութեր	2 000,0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1 133,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	4 000,0
3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	500,0
Պարտադիր վճարներ	500,0
Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	72 000,0
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	72 000,0
Տրանսպորտային սարքավորումներ	18 000,0
Վարչական սարքավորումներ	22 000,0
Ոչ նյութական հիմնական միջոցներ	31 000,0
Նախագծահետազոտական ծախսեր	1 000,0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2017թ.

N 125-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 6-Ի N 743-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը հաստատելու մասին» N 743-Ն որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակի 29-րդ տողում «79» թիվը փոխարինել «90» թվով, 30-րդ տողում «69» թիվը փոխարինել «77» թվով, 35-րդ տողում «4» թիվը փոխարինել «6» թվով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «298» թիվը փոխարինել «319» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,86 հեկտար թփուտը, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Առաջամուղի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 3,6 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել՝

1) 3,0 հեկտարը՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2) 0,6 հեկտարը՝ հատուկ պահպանվող նպատակային նշանակության՝ պատմական և մշակութային հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,002842 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 672 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Մարգսաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող.

1) պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 1,38 հեկտար թփուտը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի.

2) համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 1,6 հեկտար արոտը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ԿՈՎԿԱՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**:

1. Հաստատել «Մեսրոպ Մաշտոց համալսարանի» Կովկասագիտություն մասնագիտության բակալավրի առկա և հեռակա ուսուցման վճարովի համակարգում սովորող բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման կարգը համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ ուսման վարձավճարի փոխհատուցման ֆինանսավորումն իրականացնել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված «Բուհերում սովորող ուսանողներին տրվող փոխհատուցում» ծրագրի շրջանակում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից ներկայացվող հայտի համաձայն:

3. Մույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

4. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ

**«ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ԿՈՎԿԱՍՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՅՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են «Մեսրոպ Մաշտոց համալսարանի» (այսուհետ՝ համալսարան) Կովկասագիտություն մասնագիտության բակալավրի առկա և հեռակա ուսուցման վճարովի համակարգում սովորող բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման (այսուհետ՝ փոխհատուցում) հետ կապված հարաբերությունները:

2. Փոխհատուցումը տրվում է համալսարանի կողմից սահմանված ուսման վարձավճարի 100 տոկոսի չափով առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների համար, 50 տոկոսի չափով՝ հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների համար, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից սահմանված միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) անցումային շեմը հաղթահարելու դեպքում:

3. Փոխհատուցման գումարը հատկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ սկսած 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից՝ համաձայն համալսարանի կողմից ներկայացված ցուցակների՝ ուսման վարձավճարի նշումով:

4. Փոխհատուցումը տվյալ ուսանողի նկատմամբ դադարեցվում է.

1) ուսուցման վճարովի համակարգից ուսուցման անվճար համակարգ տեղափոխվելու.

2) սահմանված ՄՈԳ-ի անցումային շեմը չհաղթահարելու.

3) ուսման վարձավճարը այլ կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից վճարվելու դեպքերում:

5. Փոխհատուցում հատկացնելու ցուցակները յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով ճշգրտվում են համալսարանի կողմից և ներկայացվում նախարարություն:

6. Նախարարությունը, հիմք ընդունելով համալսարանի կողմից ներկայացրած ցուցակները, ուսման վարձավճարի փոխհատուցման հայտ է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

7. Համալսարանը փոխհատուցման գումարների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում նախարարություն:

8. Փոխհատուցման հետ կապված փաստաթղթերը պահվում են նախարարությունում և համալսարանում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2017թ.

N 94-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ
2016 ԹՎԱԳԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 76-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2016 թվականի մարտի 10-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման և տարածքային կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հունվարի 31-ի N 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 76-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության վարչապետի
2017 թվականի մարտի 7-ի N 94-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՏԱՐԱԾՔԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒԹՅՆ
ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ**

	Մարմինների անվանումը	Աշխատող- ների առավել- ագույն թվա- քանակը /հաստիքային միավոր/	Որից՝ դեկավարի տեղակալներ	
			ընդա- մենը	այդ թվում՝ առաջին տեղակալ
1	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ	222	3	
2	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն	41	2	1
3	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն	109	1	
4	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	162,5	2	1
5	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	60	3	
6	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն	95,5	3	
7	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն	79,0	2	
8	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	47	1	
9	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն	88	3	1
10	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն	340	3	1
11	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն	51	3	1
12	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	28		
13	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն	62	1	
14	Ստեփանակերտի քաղաքապետարան	89	2	
15	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմ	64	1	
16	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրուշի շրջանի վարչակազմ	50	1	
17	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմ	62	1	
18	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմ	63	1	
19	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմ	39	1	
20	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմ	40	1	
21	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաջաթաղի շրջանի վարչակազմ	122	1	
	Ընդամենը	1914	36	5

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում ֆաղաքացիական գործ ԸԻԴ N 1105/02/15թ.
Ֆաղաքացիական գործ ԸԻԴ N 1105/02/15թ.
Նախագահող դատավոր Ն.Խաչատրյան
Դատավորներ Ն.Աբրահամյան
Ն.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

15 փետրվարի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/
վճռաբեկության կարգով
Նախագահությամբ՝ դատավոր Վ.Հովսեփյանի
Դատավորներ՝ Ի.Կարապետյանի
Ա.Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Տարոն Վլադիկի
Հակոբյանի ընդդեմ Գագիկ Ալեքսեյի Դանիելյանի՝ 910.800 ՀՀ դրամ գանձելու
մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի
նոյեմբերի 8-ի որոշման դեմ պատասխանող Գագիկ Դանիելյանի վճռաբեկ
բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Տարոն Վլադիկի Հակոբյանը 2015 թվականի հունիսի 29-ին հայց է
ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
/այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Գագիկ Ալեքսեյի
Դանիելյանի՝ 910.800 ՀՀ դրամ գանձելու պահանջի մասին:

Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հունիսի 30-ի որոշմամբ
Արամ Գապուրաֆիկովը գործին ներգրավվել է որպես վեճի առարկայի
նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ պատասխանող
կողմում:

Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ
կիրառվել է հայցի ապահովման միջոց և հայցագնի չափով արգելանք է դրվել
Գ.Դանիելյանի գույքի և /կամ/ դրամական միջոցների վրա:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր Կ.Ղահրամանյան/ 2015
թվականի սեպտեմբերի 11-ի վճռով հայրը բավարարվել է մասնակի՝ 836.000
ՀՀ դրամի չափով:

Նշված վճռի դեմ պատասխանող Գ.Դանիելյանի կողմից բերված
վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը, ԼՂՀ վերաքննիչ դատարանը
/այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան/ /նախագահող դատավոր
Ն.Աբրահամյան, դատավորներ Ն.Գրիգորյան, Կ.Սադյան/ իր 2015 թվականի
նոյեմբերի 16-ի որոշմամբ բողոքը մերժել է և Առաջին ատյանի դատարանի
11.09.2015թ. վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ պատասխանողի կողմից բերված
վճռաբեկ բողոքի հիման վրա քննելով գործը, Գերագույն դատարանը 2016
թվականի հունվարի 15-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է
մասնակիորեն. Վերաքննիչ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 16-ի
որոշումը բեկանել է և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր Մ.Ավանեսյան/ 2016 թվականի
հունիսի 30-ի վճռով Գ.Դանիելյանից հօգուտ Տ.Հակոբյանի գանձվել է 464.100

ՀՀ դրամ, որից՝ 455.000 ՀՀ դրամ՝ սատկած և կորած խոշոր եղջերավոր անասունների արժեքի 1/2-ը, 9.100 ՀՀ դրամ՝ վճարված պետական տուրքի դիմաց:

Առաջին ատյանի դատարանի նշված վճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել հայցվոր Ս.Հակոբյանը և պատասխանող Գ.Դանիելյանը:

Վերաքննիչ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ պատասխանող Գ.Դանիելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ հայցվոր Ս.Հակոբյանի վերաքննիչ բողոքը՝ բավարարվել է: Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի հունիսի 30-ի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է: Ս.Հակոբյանի հայցը բավարարվել է. Գ.Դանիելյանից հոգուտ Տարոն Հակոբյանի բռնագանձվել է 910.800 ՀՀ դրամ: Գ.Դանիելյանից հոգուտ ԼՂՀ ԱՆ «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի բռնագանձվել է 20.900 ՀՀ դրամ՝ որպես փորձագետին վճարվելիք գումար: Գ.Դանիելյանից հոգուտ Ս.Հակոբյանի բռնագանձվել է 31.866 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար: Հայցի ապահովման միջոցը որոշվել է պահպանել մինչև դատական ակտի կատարումը:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ պատասխանող Գ.Դանիելյանը 2016 թվականի դեկտեմբերի 14-ին բերել է վճռաբեկ բողոք և միջնորդել վճռաբեկ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը համարել հարգելի, քանի որ ինքը վճռաբեկ բողոքն ուղարկել է 2016 թվականի դեկտեմբերի 8-ին՝ փոստով, բողոքին կցել պետական տուրքը վճարելու մասին անդորրագիրը, բողոքի պատճենը ԼՂՀ վերաքննիչ դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները, սակայն թյուրիմացաբար վճռաբեկ բողոքը Գերագույն դատարան ուղարկելու փոխարեն բողոքի երկու օրինակը դրվել է Ա.Գապուրաֆիկովին ուղարկվելիք ծրարում, որի մասին իրեն հայտնի է դարձել 2016 թվականի դեկտեմբերի 14-ին:

Գերագույն դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ բողոքում թույլ տրված ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Պատասխանող Գ.Դանիելյանը 2017 թվականի հունվարի 17-ին փոստային ծառայության միջոցով կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2017 թվականի հունվարի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանի որոշումն անօրինական է, չհիմնավորված, չպատճառաբանված, այն չի բխում գործի նյութերից: Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.2-րդ հոդվածով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտում: Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-23-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ, 229-րդ հոդվածները, սխալ է կիրառել և մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 776-րդ հոդվածը, 1065-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք չպետք է կիրառեր, ինչը ազդել է գործի ելքի վրա, հանգեցնելով գործի սխալ լուծմանը: Վերաքննիչ դատարանը չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ, 302-րդ, 685-687-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Նշված պնդումները բողոքաբերը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ և 19-րդ հոդվածների 1-ին մասերը, ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածը, բողոքաբերը նշել է, որ դատավոր Հ.Աբրահամյանը չի քննարկել իր կողմից ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը /որն ինքը ներկայացրել է այն պատճառաբանությամբ, որ տվյալ դատավորը նախկինում մասնակցել է գործի քննությանը/: Մինչդեռ մյուս դատավորները՝ Հ.Գրիգորյանը և Կ.Սաղյանը, բավարարել են նրանց հայտնած ինքնաբացարկի միջնորդությունը և չեն մասնակցել դատական նիստին: Հետևաբար, գտնում է, որ Հ.Աբրահամյանը անօրեն մասնակցել է դատական նիստին և ազդել գործի ճիշտ լուծմանը, այսինքն՝ Վերաքննիչ դատարանը բողոքարկված որոշումը կայացրել է ոչ օրինական կազմով, ինչը հիմք է դատական ակտի բեկանման համար:

Ըստ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը չպետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 776-րդ հոդվածը, քանի որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի բնորոշման մեջ հստակ տրված է կատարողի ծառայություն մատուցելու պարտականությունը և դրա դիմաց վճարելու պատվիրատուի հիմնական պարտականությունը: Մինչդեռ իր և Տ.Հակոբյանի միջև նման պարտավորություն չի առաջացել, քանի որ ինքը որևէ ծառայություն չի մատուցել, իսկ հայցվորն իրեն չի վճարել:

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածը, քանի որ գործի նյութերով հաստատված է, որ ինքը երբևէ հայցվորի, ինչպես նաև իր անասունները չի խնամել, չի պահել, չի կթել, և այն կատարել է անասնապահ Արամը, որին ինքը վճարում էր իր անասունները պահելու համար: Արամը հայցվորի անասուններն իր առաջադրանքով չէր պահում: Հայցվորը պարբերաբար ներկայանալիս է եղել անասնաֆերմա՝ հսկողություն իրականացրել, անասնաբույժի հետ համապատասխան պրոֆիլակտիկ միջոցառումներ կատարել: Ինքը ո՛չ բանավոր և ո՛չ էլ գրավոր որևէ պարտականություն հայցվորի հանդեպ չի ստանձնել:

Մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածի 2-րդ մասը, բողոքաբերը նշել է, որ անասնապահ Արամն իր աշխատողը չի համարվում: Հայցվորի անասունները պահելը, կթելը, խնամելն Արամն իր վերահսկողությամբ չի իրականացրել: Հայցվորն Արամին վճարել է ինչպես անձամբ, այնպես էլ փոխանցմամբ՝ իր կամ ծանոթ մարդկանց միջոցով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է Գերագույն դատարանի 15.01.2015թ. որոշման մեջ նշված իրավական մեկնաբանություններն այն մասին, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Գ.Դանիելյանը ստանձնել է Տ. Հակոբյանի անասունները պահելու /պահպանելու/, խնամելու, արածեցնելու պարտականություններ...:

Ըստ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել և հայցվորի հայցապահանջը բավարարելու հիմքում դրել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածը, մանավանդ որ հայցվորը հայցադիմումը և վերաքննիչ բողոքը նման հիմքով չի բերել: Չնայած իր և հայցվորի միջև որևէ պայմանագրային կամ արտապայմանագրային պարտավորություն չի առաջացել, սակայն գործով ներկայացված հայցադիմումի հիմքում դրվել են իր կողմից պայմանագրային պարտավորությունները խախտելու փաստերը, այլ ոչ թե՛ արտապայմանագրային պարտավորությունները: Ուստի, բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածը և անհիմն է հղում կատարել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածին և նշել, որ ինքը չի ապացուցել պարտավորությունը խախտելու մեջ իր մեղքի բացակայությունը:

Բողոքաբերը, վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նշել է նաև, որ գրավոր պայմանագիր հայցվորի հետ չի կնքել, և հայցվորը չի ներկայացրել իր և նրա միջև որևէ գործարքի ու նրա պայմանների հաստատման մասին ապացույցներ:

Իր բողոքում բողոքաբերն անդրադարձել է նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի «Գույքի անհատույց օգտագործում» գլխի նորմերին և մեջբերելով

685-687-րդ հոդվածները, եզրակացրել, որ Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները չի գնահատել համակցության մեջ, և անտեսել է, որ տարածքը անասնաֆերման, անշարժ գույք է, որի հետ կապված իրավահարաբերություններն ունեն առանձին օրենսդրական կարգավորում, ինքն անասնաֆերմայի սեփականատերը չէ, այդ տարածքը վարձակալել է, բայց համաձայնվել է այդ տարածքն անհատույց ժամանակավոր տրամադրել հայցվորին, չնայած սեփականատիրոջ կողմից դրա համար լիազորված չէր:

Վերաքննիչ դատարանի կողմից, ինչպես նաև փորձագիտական եզրակացությամբ երեք հատ սատկած ցուլերի և մեկ հատ կորած երինջի կենդանի քաշի հիմք է ընդունվել հայցվորի հայցադիմումում նշված քաշը, այն դեպքում, երբ ձմռան ամիսներին անասունները նշված քաշը չեն ունենում: Փորձագետը, որը չուներ անասնաբուժական կրթություն, չէր կարող և չի որոշել տարվա այդ եղանակին կենդանիների քաշը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 8-ի որոշումը և մերժել հայցը:

2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճարել բողոքի պատասխանում հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը խնդրել է մերժել վճարել բողոքը, քանի որ բողոքն անհիմն է: Դատական նիստում պատասխանող Գ.Դանիելյանը ինքնաբացարկի միջնորդություն վերստին չի ներկայացրել գործը քննող դատարանի կազմին, համաձայնվել է դատարանի կազմին: Դատավոր Հ.Աբրահամյանի կարծիքը չէր կարող մյուս երկու դատավորի կարծիքից վեր լինել: Հայցվոր կողմը չի կասկածում դատական համակարգի որևէ դատավորի անկողմնակալությանը: Որևէ նշանակություն չունի, թե որ դատավորը քանի անգամ է մասնակցել նույն գործին, քանի դեռ ապացուցված չէ անկողմնակալության կամ այլ կասկածների հիմքը:

Անհիմն է նաև բողոքի մյուս հիմքը, քանի որ սկսած առաջին ատյանի դատարանի առաջին դատական նիստից մինչև բողոքարկվող դատական ակտ կայացնելը պատասխանողը իրարամերժ դիրքորոշումներ է ներկայացրել, մի դեպքում, հայցը մասնակի ընդունելով, նշելով, որ երրորդ անձը իր աշխատողն է, մյուս դեպքում՝ իր աշխատողը չէ: Պատասխանողը նշում է, որ ինքը գրավոր պայմանագիր չի կնքել, սակայն չի բացատրում, թե ինչու հայցվորը այդքան ժամանակ գումար է վճարել, եթե հայցվորի և պատասխանողի միջև պայմանավորվածություն չի եղել: Պատասխանողը նշել է, որ իր տարածքում անասունները պահելը անհատույց է եղել, թե իբր ինքը օգուտ չի ունեցել, սակայն երրորդ անձն այլ դիրքորոշում է արտահայտել: Փաստն այն է, որ հայցվորը զգալի գումարներ է վճարել իր անասունները պահելու դիմաց, և չորս գլուխ անասունը պատասխանողի մեղքով է անկել, ու այդ անասունների գնի չափով հայցվորը վնաս է կրել: Երկու տարի է դատական ծախսերի և ժամանակի անհարկի կորցման մասով ևս վնաս է կրում:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայցվոր Ս. Հակոբյանը և պատասխանող Գ. Դանիելյանը 2014 թվականի մարտ ամսին բանավոր պայմանավորվածություն են ձեռք բերել այն մասին, որ պատասխանողի տիրապետման տակ գտնվող անասնաֆերմայում անասնապահ Ա.Գապտրաֆիկովը /որը պահում էր պատասխանողին և այլ անձանց պատկանող անասունները/ պետք է պահի հայցվորին պատկանող 53 գլուխ խոշոր եղջերավոր անասունները, իսկ հայցվորը պետք է վճարի 2.000-2.500 ՀՀ դրամ ամսավճար՝ յուրաքանչյուր գլխի դիմաց: Նշված պայմանավորվածությանը երրորդ անձ Ա.Գապտրաֆիկովը ներկա չի եղել,

բայց մինչև այդ նա պատասխանողին տվել է իր համաձայնությունը հայցվորի անասունները ևս պահելու համար:

2. 2014 թվականի գարնանը Տ.Հակոբյանին պատկանող անասունները տեղափոխվել են Մարտունու շրջանի Նորշենի գյուղամերձում գտնվող անասնաֆերման ու հանձնվել անասնապահ Ա. Գապտրաֆիկովին, ով պահում, արածեցնում էր նաև պատասխանողի անասունները: Հայցվորն անասնաբույժի հետ պարբերաբար այցելում էր անասնաֆերմա, ստուգում անասնազիլաքանակը և անասունների վիճակը:

3. 2015 թվականի հունվարի 6-ին հայցվորին պատկանող չորս գլուխ խոշոր եղջերավոր անասունները գիշերը դուրս են եկել ֆերմայից և ֆերմայից դուրս գտնվող տարածքում սատկել փկանքից, իսկ մեկ գլուխ խոշոր եղջերավոր անասունը /երինջը/ կորել է ապրիլ ամսում: Հայցվորը հայց է ներկայացրել երեք սատկած և մեկ կորած անասունների արժեքը բռնագանձելու մասին, քանի որ մեկ սատկած անասունի միսը հաջողվել է հանձնել:

4. Փկանքից սատկած անասուններին գիշերը փնտրել և հայտնաբերել է անասնապահ Ա.Գապտրաֆիկովը, որի կանչով ներկայացած պատասխանողը կորել է սատկած անասունների պարանոցը և տեղի ունեցածի մասին հայտնել հայցվորին:

5. Ըստ պատասխանողի և երրորդ անձի ցուցմունքների՝ փկանքի ախտանիշներն ի հայտ գալու պահին ժամանակին միջամտելու դեպքում անասուններին հնարավոր էր փրկել /1-ին հատոր, գ.թ. 60, 61/:

6. Գործում առկա անասնաբույժի կողմից տրված 07.01.2015թ. տեղեկանքի համաձայն՝ հայցվորին պատկանող սատկած անասունների յուրաքանչյուրի միջին քաշը կազմում էր, մոտավորապես, 210-230 կգ /հատոր 1-ին, գ.թ. 22/:

7. «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի փորձագետի կողմից կատարված ապրանքագիտական փորձաքննության 03.05.2016թ. Հմ՝ 10916.16 եզրակացության համաձայն՝ մեկ գլուխ 210 կգ կենդանի քաշով ցուլիկի շուկայական արժեքը 2015թ. հունվարի 6-ի և փորձաքննության կատարման պահի դրությամբ կազմում է 238.000 ՀՀ դրամ, համապատասխանաբար չորս ցուլիկի՝ 952.000 ՀՀ դրամ, իսկ 230 կգ կենդանի քաշով ցուլիկի արժեքը՝ 259.000 ՀՀ դրամ, համապատասխանաբար չորս հատի՝ 1.036.000 ՀՀ դրամ: Ինչ վերաբերում է կորած երինջի շուկայական արժեքին, ապա փորձագետն այդ հարցին չի պատասխանել, քանի որ բացակայում էին տվյալները երինջի քաշի վերաբերյալ /հատոր 2-րդ, գ.թ. 4-6/: Առաջին ատյանի դատարանի դատական նիստում պատասխանողը համաձայնվել է երինջի գինը համարել 176.000 ՀՀ դրամ:

8. Պատասխանող Գ.Դանիելյանը 28.08.2015թ. Առաջին ատյանի դատարանի դատական նիստում հայցը՝ մեկ գլուխ կորած երինջի մասով ընդունել է, մնացած մասով՝ չի ընդունել, գտնելով, որ անասունների փկանքի համար պատասխանատվություն վրա չի հասնում /հատոր 1-ին, գ.թ. 56 /հակ.կողմ/:

9. Ստորադաս դատարանները, հաշվի առնելով, որ փորձագետի եզրակացությամբ անասունների արժեքն ավելին է հայցվորի պահանջածից, և այն, որ դատարանը հայցը քննում է հայցի հիմքի և առարկայի սահմաններում, և հայցի առարկան ավելացնելու լիազորություն դատարանը չունի, հայցի բավարարման հիմք են ընդունել հայցվորի կողմից հայցադիմումում պահանջված գումարը:

10. Մինչև դատարան հայց ներկայացնելը հայցվոր Տ.Հակոբյանն անասնապահ Ա.Գապտրաֆիկովի դեմ գրավոր դիմել է ԼՂՀ ոստիկանության Մարտունու շրջբաժին և իրականացված ստուգման արդյունքում 22.05.2015թ. կազմված եզրակացության համաձայն՝ «անասնապահ Արամ Գապտրաֆիկովի արարքում հանցագործության հատկանիշներ չկան, սակայն նրա անփութության պատճառով Տարոն Հակոբյանին պատկանող չորս գլուխ ցուլերը մնացել են դաշտում ու սատկել փկանքից, իսկ մեկ գլուխ երինջը կորել է» /հատոր 1-ին, գ.թ. 10/:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը պետք է մերժել և որոշումը թողնել օրինական ուժի մեջ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել, տնօրինել և ժառանգել օրինական հիմքերով որպես սեփականություն ձեռք բերած գույքը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի «Սեփականության իրավունք» վերտառությամբ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականության հարգանքի իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից այլ կերպ, քան միայն ելնելով հասարակության շահերից և օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններում:

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ և 45-րդ հոդվածների 1-ին մասերը երաշխավորում են խախտված իրավունքների դատական պաշտպանության և հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության յուրաքանչյուրի իրավունքները:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի «Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը: Քաղաքացիական իրավունքների իրականացումը» և «Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ համապատասխանաբար 2-րդ և 3-րդ գլուխները սահմանում են քաղաքացիական իրավունքների ծագման հիմքերը և քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները, վնասի հասկացությունը և այլն:

Այսպես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց...:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնաս/, չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության

սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր /բաց թողնված օգուտ/, ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ հաշվի առնելով, որ ստորադաս դատարանների կողմից կողմերի միջև ծագած իրավահարաբերությանը վերաբերող քաղաքացիաիրավական նորմերը տարբեր մեկնաբանությամբ են կիրառվել, և որ բողոքարկի կարծիքով դատարանների կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված էր ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Սույն վճռաբեկ բողոքում բարձրացվել են կողմերի միջև գործարք կնքելու, պարտավորություններ առաջանալու, քաղաքացիական պատասխանատվություն կրելու, դատարանի կողմից հայցի փաստական և իրավական հիմքերի տարբերակման, գործը դատարանի կողմից ոչ օրինական կազմով քննելու հարցերը: Նշված հարցերին պատասխանելու համար Գերագույն դատարանը կարևորում է գործարքի վավերության, խախտված իրավունքների լիարժեք պաշտպանության հարցադրումները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում Գերագույն դատարանը պետք է պարզի հետևյալ հարցերը.

1/ արդյո՞ք կողմերի միջև ծագել են իրավահարաբերություններ, որոնք ենթակա են դատական պաշտպանության.

2/ արդյո՞ք հայցվորին պատճառվել է վնաս, և արդյո՞ք պատասխանողը /երրորդ անձը/ ձեռնարկել են օբյեկտիվորեն հնարավոր, անհրաժեշտ և իրենից կախված բոլոր ողջամիտ միջոցներն հայցվորին պատճառված վնասը կանխելու համար.

3/ արդյո՞ք պատասխանողը պատասխանատու է երրորդ անձի գործողությունների համար:

Գերագույն դատարանը հարկ է համարում մինչև վերը նշված հարցերին պատասխանելը, անդրադառնալ վճռաբեկ բողոքի առաջին հիմքին՝ դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը չքննարկելու վերաբերյալ և գտնում է, որ բողոքի առաջին հիմքն անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.2-րդ հոդվածի համաձայն՝ դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝ 1/ նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, 2/ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ 1/ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, որը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել...:

Դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ կարգավորումները սահմանված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-21-րդ հոդվածներով, ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածով:

Այսպես՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 61-րդ հոդվածով:

Բողոքարկի կարծիքով, դատավոր Հ.Աբրահամյանի կողմից իր ինքնաբացարկի միջնորդությունը /որը ներկայացվել է մեկ դիմումով միանգամից սույն գործը նախկինում քննած բոլոր դատավորներին/ չքննարկելը և նախկինում գործով նախազահող հանդիսանալը վկայում են այն մասին, որ գործը քննվել է ոչ օրինական կազմով: Մինչդեռ, գործի նյութերից հետևում է, որ պատասխանողի կողմից տվյալ միջնորդությունը

ներկայացնելու պահին դատավոր Հ.Աբրահամյանը ընդգրկված չէր դատարանի կազմի մեջ, գործը քննությանն էր նշանակված 14.09.2016թ. դատավորներ Հ.Գրիգորյանի, Կ.Սաղյանի և Ն.Գրիգորյանի կազմով, որից Հ.Գրիգորյանը և Կ.Սաղյանը որոշումներ են կայացրել պատասխանող Գ.Դանիելյանի կողմից իրենց հայտնված ինքնաբացարկի միջնորդությունը բավարարելու մասին: Այնուհետև դատարանի նախագահը ձևավորել է գործի քննության նոր դատական կազմ՝ նրա մեջ մտցնելով դատավորներ Հ.Խաչատրյանին, Լ.Ավանեսյանին և Ն.Գրիգորյանին /հատոր 2-րդ, գ.թ. 91/: Հետագայում դատավոր Լ.Ավանեսյանի փոխարեն գործով դատական կազմ է մտցվել դատավոր Հ.Աբրահամյանը, որին պատասխանողը 07.10.2016թ. և 01.11.2016թ. դատական նիստերի ընթացքում ինքնաբացարկի միջնորդություն չի ներկայացրել:

Բացի այդ, ԼՂՀ դատական օրենսգրքի՝ «Դատավորի ինքնաբացարկը» վերառությամբ 61-րդ հոդվածում թվարկված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում միայն դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել: Նշված իրավական նորմի մեկնաբանությունից բխում է, որ նույն վերադաս դատական ատյանում գործի քննությանը մասնակցելը չի կարող հիմք հանդիսանալ դատավորի ինքնաբացարկի համար, եթե այլ ողջամիտ կասկածներ չկան նրա անկողմնակալության վերաբերյալ /կամ եթե դատավորն ինքն չի համարում, որ վեճի լուծման նկատմամբ նախատրամադրվածություն ունի/, իսկ պատասխանողը որևէ ապացույց չի ներկայացրել իր ինքնաբացարկի միջնորդությունը հիմնավորելու վերաբերյալ, ուստի անհիմն է բողոքի փաստարկը գործը ոչ օրինական կազմով քննելու վերաբերյալ:

Անհիմն են նաև բողոքի փաստարկները՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների պահանջների խախտման մասին, քանի որ բողոքաբերը գործով դատական նիստերի ընթացքում որևէ միջնորդություն կամ իր փաստարկները հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել, և ստորադաս դատարանները գործով հավաքված յուրաքանչյուր ապացույց գնահատել են գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքը /նյութական իրավունքի նորմերի, մասնավորապես ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 776-րդ, 1065-րդ և 417-րդ հոդվածների պահանջների, խախտման մասին/ ևս անհիմն է և չի կարող դատական ակտի բեկանման հիմք հանդիսանալ՝ ելնելով հետևյալից.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր գործարք նախ և առաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Որպես ընդհանուր կանոն կամքի արտահայտությունը ձեռք է բերում որոշակի գործողության ձև՝ գույքը հանձնելը, դրամ վճարելը և այլն: Գործարքը կատարած կողմն իրավունք ունի իր շահերի պաշտպանության համար դիմել դատարան:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածը սահմանում է, որ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր /հասարակ կամ նոտարական/ ձևով: Օրենսդիրը նաև սահմանում է, թե ինչպիսի իրավական հետևանքներ է առաջացնում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը /ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդված/:

ԼՂՀ Գերագույն դատարանն իր 15.01.2015թ. որոշմամբ սույն գործով անդրադարձել է գործարքի /պայմանագրի/ կնքման ձևին ներկայացվող օրենսդրական պահանջներին և գործարքի հասարակ գրավոր ձևը

չպահպանելու իրավական հետևանքներին: Մասնավորապես, Գերագույն դատարանը, վերլուծելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածը, նշել է, որ գործարքի գրավոր ձևը չպահպանելն ինքնին գործարքի անվավերության չի բերում, նման գործարքից կողմերի համար սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ծագում են: Գործարքի գրավոր ձևը չպահպանելու իրավական հետևանքները կրում են դատավարական բնույթ, վեճի դեպքում կողմերին զրկում են ի հավաստումն գործարքի և նրա պայմանների՝ վկաների ցուցմունքները վկայակոչել...:

Քաղաքացիական օրենսդրության և տեսության վերլուծությունից հետևում է, որ ի տարբերություն բացարձակ որոշակի /իմպերատիվ/ նորմերի, որոնք բացարձակ ճշտությամբ սահմանում են հասարակական հարաբերությունների մասնակիցների գործողությունների պայմանները, իրավունքներն ու պարտականությունները կամ դրանց խախտման համար իրավական պատասխանատվության չափը, հարաբերական որոշակի /իրավիճակային/ նորմերը հասարակական հարաբերությունների մասնակիցների գործողությունների, նրանց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև իրավաբանական պատասխանատվության մասին բավարար ամբողջական տվյալներ չեն պարունակում և իրավակիրառողին հնարավորություն են տալիս վեճը լուծելիս հաշվի առնել կոնկրետ գործի փաստերը:

Ինչպես հետևում է գործի նյութերից, հայցվոր Տ.Շակոբյանը և պատասխանող Գ.Դանիելյանն անասունները պահելու /պահպանելու/, արածեցնելու մասին գրավոր գործարք /պայմանագիր/ չեն կնքել, այնուամենայնիվ, կողմերի ձեռք բերված պայմանավորվածության համաձայն անասունները տեղափոխվել են Գ.Դանիելյանի տիրապետության տակ գտնվող անասնաֆերման, որտեղ յուրաքանչյուր անասունի դիմաց 2.000-2.500 ՀՀ դրամ ամսավճարով պատասխանողի անասնապահը պետք է պահեր, արածեցներ անասուններին, այսինքն՝ պատասխանողի մոտ արդեն իսկ առաջացել էր պարտավորություն, պատասխանատվություն նշված անասունների պահպանության համար, հակառակ դեպքում կստացվեր, որ անասուններն անտեր են և որևէ մեկը չի կրում պատասխանատվություն դրանց համար:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, կատարելով Գերագույն դատարանի 15.01.2015թ. որոշման պահանջները, բազմակողմանի հետազոտել են կողմերի միջև առաջացած հարաբերությունների իրական բնույթը և ճիշտ հանգել այն եզրակացության, որ կողմերի միջև ծագել են պարտավորություններ, որոնց բնույթը համապատասխանում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 776-րդ հոդվածի պահանջներին, համաձայն որոնց՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել /կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն/, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

Գերագույն դատարանը փաստում է, որ կողմերի միջև ձևավորված հարաբերություններում կան նաև պահատվության պայմանագրի տարրեր:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ չնայած դրան, որ, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 776-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր, նշված իրավական նորմը չի պարունակում դրույթ այն մասին, որ պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է պայմանագրի անվավերությանը, կամ որ նման պայմանագիրն առոչինչ է:

Ստորադաս դատարանները ճիշտ են եզրակացրել, որ հայցվորի և պատասխանողի միջև ծագած իրավահարաբերության հիմքով ծագել է պարտավորություն, որը պատասխանողը /ու երրորդ անձը/ պատշաճ չի կատարել և կրում է հայցվորին հասցված վնասը հատուցելու պարտավորություն, սակայն Առաջին ատյանի դատարանը գտել է, որ հայցվորի առջև հավասար պատասխանատվություն են կրում և՛ պատասխանողը, և՛ երրորդ անձը ու հայցը բավարարել մասնակիորեն, իսկ

Վերաքննիչ դատարանը հայցը լրիվությամբ բավարարել է, հիմնավոր համարելով հայցվորի վերաքննիչ բողոքն այն մասին, որ ինքը պայմանավորվածությունը ձեռք է բերել պատասխանողի, այլ ոչ թե՝ երրորդ անձի հետ, և որ իր առջև պատասխանողն է կրում իրեն հասցված վնասը հատուցելու պարտավորությունը, որն իր հերթին ունի հետադարձ պահանջի իրավունք և դրան համապատասխան կարող է վնասը հատուցելուց հետո երրորդ անձից պահանջել կամ ամբողջ հատուցած գումարը կամ էլ ինչ որ չափ:

Գերագույն դատարանը Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումը համարում է իրավաչափ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 418-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությանն կատարմանն ուղղված պարտապանի աշխատողների գործողությունները համարվում են պարտապանի գործողություններ: Պարտապանը պատասխանատու է այդ գործողությունների համար, եթե դրանք հանգեցրել են պարտավորությունը չկատարելուն կամ դրա անպատշաճ կատարելուն:

Ելնելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի «Քաղաքացիական իրավական նորմերի կիրառումն անալոգիայով» վերտառությամբ 9-րդ հոդվածի տրամաբանությունից, Գերագույն դատարանը հիմնավոր է համարում սույն գործով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կիրառումը:

Այսպես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային /ծառայողական, պաշտոնեական/ պարտականությունները կատարելիս պատճառված վնասը: Սույն գլխի կանոնների համաձայն՝ աշխատող է համարվում աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարող քաղաքացին, եթե նա գործել է կամ պետք է գործեր համապատասխան իրավաբանական անձի կամ քաղաքացու առաջադրանքով և աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ նրա վերահսկողության ներքո:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1079-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի բովանդակությունից հետևում է, որ այլ անձի պատճառած վնասը հատուցած անձը հետադարձ պահանջի իրավունք ունի այդ անձի նկատմամբ, համատեղ պատճառած վնասը հատուցած վնաս պատճառողն իրավունք ունի մյուս վնաս պատճառողներից պահանջել տուժողին վճարված հատուցման բաժինը...:

Վերոնշյալ իրավանորմերի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը «Աշխատող» հասկացությունը լայն է մեկնաբանում: Խոսքը գնում է ոչ միայն աշխատանքային հարաբերություններով կապված գործատուի հետ անձանց մասին, այլև նրանց մասին, ով աշխատանք է կատարում քաղաքացիական պայմանագրի հիման վրա: Տվյալ դեպքում պետք է պահպանված լիներ այն պայմանը, որ այդ անձինք գործել են կամ պետք է գործեին գործատուի առաջադրանքով և նրա հսկողության տակ:

Ինչպես հետևում է գործի նյութերից, երրորդ անձ Ա.Գապուրաֆիկովը հայցվոր Տ.Հակոբյանի հետ ունեցած հարաբերություններում ինքնուրույն չի գործել, նա պահում էր պատասխանողին պատկանող անասունները, որոնց ավելացել են հայցվորի անասունները, պատասխանողը վարձատրում է երրորդ անձին, հոգ տանում նրա կենցաղային հարցերը, երրորդ անձը հայցվորի անասունները պահում էր պատասխանողի առաջարկով, ինչի մասին պայմանավորվածությունը ձեռք է բերվել ոչ թե հայցվորի և երրորդ անձի միջև, այլ՝ հայցվորի և պատասխանողի: Պատասխանողը ղեկավարում է երրորդ անձի կողմից կատարվող աշխատանքները, նա պետք է ստեղծեր ֆերմայում անասունները պատշաճ խնամելու պայմանները: Առանց պատասխանողի թույլտվության երրորդ անձը չէր կարող այլ անձի պատկանող անասունները ֆերմայում պահել:

Վերը նշվածից ելնելով՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ օրենքով պաշտպանման ենթակա իրավահարաբերությունները ծագել են հայցվորի և պատասխանողի միջև, հետևաբար հայցվորն իրավասու է

պահանջել իրեն հասցված վնասի հատուցումը հենց պատասխանողից: Նշված դիրքորոշումը բխում է նաև ստորև բերված իրավական նորմերի բովանդակությունից:

Այսպես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պարտավորության ուժով մի անձը /պարտապանը/ պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: 2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից»:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը սահմանում է պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության հիմքերը, ընդ որում սահմանելով, որ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

Ինչ վերաբերում է բողոքի փաստարկներին այն մասին, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել և հայցվորի պահանջը բավարարելու հիմքում դրել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածը, այն դեպքում, երբ որ հայցվորը հայցադիմումը և վերաքննիչ բողոքը նման հիմքով չի բերել, ապա Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հայցի հիմքը, որպես հայցի բովանդակության տարր, հայցը բնութագրում է այն տեսանկյունից, թե ինչ իրավաբանական փաստերի հիման վրա է հայցվորը խնդրում պաշտպանել իր նյութաիրավական պահանջը: Այդ իրավաբանական փաստերն էլ հենց հանդիսանում են հայցի հիմքը: Դատարանը կաշկանդված չէ հայցվորի հայտարարած փաստերի իրավական որակմամբ և պարտավոր է իրավական գնահատական տալ, իրավաբանորեն որակել հենց հայցվորի ցույց տված իրավաբանական փաստերը: Ընդ որում, ի տարբերություն հայցի հիմքի իրավաբանական փաստերի, հայցի իրավական հիմնավորումը հայցվորի կողմից կարող է փոփոխվել վարույթի բոլոր փուլերում, այդ թվում՝ դատաքննության ժամանակ, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ընթացքում: Քաղաքացիական գործի քննության և լուծման համար անհրաժեշտ իրավական նորմերը որոշելը և կիրառելը դատարանի պարտականությունն է: Դատարանը բոլոր դեպքերում դատական քննության ենթակա վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերը ընտրում և կիրառում է՝ ելնելով հայցի հիմքում ընկած իրավաբանական փաստերից, այլ ոչ թե հայցվորի վկայակոչած իրավական նորմերից /որոնք կարող են նույնիսկ ոչ ճիշտ վկայակոչված լինեն/:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Դոդովն ընդդեմ Բուլղարիայի գործով իր 17.01.2008թ. վճռում նշել է, որ «քաղաքացիական դատավարությունում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ դատարանները քննության են առնում և որոշում իրենց ներկայացված հայցերի իրավական բնութագիրը՝ առանց հաշվի առնելու հայցվորի առաջարկած իրավական բնութագիրը: Հայցվորը պետք է ներկայացնի վիճելի հարցը՝ հստակեցնելով փաստերը և իր հայցապահանջը, սակայն նա չի կրում որևէ պարտականություն՝ հստակեցնելու դրա բնութագիրն իրավունքում: Եթե նույնիսկ հայցվորը նշում է իր հայցի իրավական բնութագիրը, դատարանը կաշկանդված չէ դրանով: Դատարանը պետք է տա իր ինքնուրույն գնահատականը»: Հետևաբար, անհիմն է բողոքի փաստարկը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի պահանջների խախտման մասին:

Գերագույն դատարանն անհիմն է համարում նաև բողոքի փաստարկն այն մասին, որ ինքը որևէ ծառայություն չի մատուցել հայցվորին, հետևաբար,

իրենց միջև պարտավորություն չի առաջացել: Ստորագրած դատարանները միանգամայն ճիշտ են հանգել այն եզրակացության, որ պատասխանողի կողմից տիրապետվող ֆերմայում անասուններ պահելը, անմիջական կատարողին աշխատանք հանձնարարելը և այն կազմակերպելը ևս ծառայություններ են համարվում:

Ինչ վերաբերում է Գերագույն դատարանի 15.01.2015թ. որոշմանը վկայակոչելուն, ապա Գերագույն դատարանը փաստում է, որ Գերագույն դատարանը նշված որոշմամբ գործն ուղարկել է նոր դատաքննության՝ բողոք բերողի փաստարկները ստուգելու և գործի քննությունը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ կատարելու համար: Գերագույն դատարանը նշված որոշմամբ նաև փաստել է, որ ստորագրած դատարանների կողմից անհիմն կիրառվել են դելիկտային իրավահարաբերությունների նորմերը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ անհրաժեշտ է տարբերել պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունը: Պայմանագրային պատասխանատվությունը ծագում է /վրա է հասնում/ պայմանագրից ծագող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով, իսկ արտապայմանագրային պատասխանատվությունը տեղի է ունենում, որպես կանոն, երբ վնասը պատճառվել է տուժողին այն անձի կողմից, որի հետ ինքը չի գտնվում պայմանագրային հարաբերությունների մեջ: ԼՂՀ քաղաքացիական օրենսդրությունը ելնում է դրանից, որ հայց կարող է ներկայացվել հիմքերից մեկով՝ պայմանագրային կամ արտապայմանագրային պատասխանատվությունը վրա հասնելու: Սակայն նշված ընդհանուր կանոնից բացի օրենսդիրը նախատեսել է դեպքեր, երբ որ այն նորմերը, որոնք կարգավորում են արտապայմանագրային հարաբերությունները, տարածվում են նաև առանձին պայմանագրերից ծագող պարտավորությունների վրա: Այլ կերպ՝ այն կանոններով, որով կանոնակարգվում են դելիկտային պարտավորությունները, կարող է հատուցվել վնասը, որը առաջացել է պայմանագրային պարտավորությունները խախտելու արդյունքում /օրինակ՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1082-րդ հոդվածը/:

Գերագույն դատարանը գտնում է, որ պայմանագրային պարտավորությունների այն մասով, որով հնարավոր չէ պարզել վնասի առաջացման դեպքում կողմերի իրավունքների և պարտականությունների ծավալը, հնարավոր է դելիկտային հարաբերությունները կարգավորող նորմերի կիրառումը:

Ինչ վերաբերում է բողոքում վկայակոչված ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 685-687-րդ հոդվածները կիրառման ենթակա լինելու վերաբերյալ փաստարկին, ապա Գերագույն դատարանը ընդգծում է, որ նշված փաստարկը սույն գործով չունի էական /իրավական/ նշանակություն, քանի որ անշարժ գույքը՝ ֆերման, փաստացի օգտագործում էր պատասխանողը /ըստ բողոքբերողի ստորագրած դատարաններում և Գերագույն դատարանում տված ցուցմունքի և բացատրության վարձակալության հիմունքներով, սակայն գործում բացակայում է նման փաստաթուղթը/, և հայցվորին վնասը պատճառվել է ոչ թե անշարժ գույքի շահագործմամբ, այլ նրա և երրորդ անձի գործողությունների /անգործության/ հետևանքով:

Գերագույն դատարանը, անդրադառնալով հայցագնի չափին /հայցվորին պատճառված վնասի/ համաձայն չլինելու մասին բողոքի փաստարկին, հարկ է համարում ընդգծել, որ պատասխանող Գ.Դանիելյանը, ի խախտումն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների, դատարաններում չի ներկայացրել իր առարկությունը հիմնավորող որևէ ապացույց: Մինչդեռ, գործով ներկայացված ապացույցներով հիմնավորվել է վնասի նշված չափը:

Այսպիսով, վերը շարադրված պատճառաբանություններից ելնելով, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքարկված որոշումը փոփոխելու կամ բեկանելու հիմքեր չկան, և պետք է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

սահմանված Գերագույն դատարանի լիազորությունը և մերժել վճռաբեկ բողոքը ու Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանին խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Քանի որ ըստ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, և Վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված հարցը լուծվել է, իսկ վճռաբեկ բողոքը մերժվում է, ապա դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253–256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Գագիկ Ալեքսեյի Դանիելյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 8-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում ֆաղաքացիական գործ ԸԻԴ N 0003/02/14թ.
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0003/02/14թ.
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան

Կ.Սաղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ 14 փետրվարի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ի.Կարապետյանի
դատավորներ՝ Գ.Արզումանյանի
Ա.Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի ԼՂՀ Մարտունու շրջանի Մարտունու համայնքի ընդդեմ Արարատ Բահատուրի Խաչատրյանի՝ ճանապարհից վտարելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման դեմ պատասխանող Արարատ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Հայց հարուցելով դատարան՝ ԼՂՀ Մարտունու շրջանի Մարտունու համայնքի ղեկավար Միեր Խաչատրյանը պահանջել է Արարատ Խաչատրյանին վտարել «համայնքային սեփականություն հանդիսացող ճանապարհահատվածից»:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ 2015 թվականի ապրիլի 30-ի վճռով հայցը մերժվել է: Կողմերը նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում չեն բողոքարկել:

2016 թվականի նոյեմբերի 3-ին նշված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է բերել գործին մասնակից չդարձված անձ Նելսոն Մուսայելյանը: Միաժամանակ միջնորդություն է ներկայացվել բողոք բերելու՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին: ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2016 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել, վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է. Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի ապրիլի 30-ի վճիռն ամբողջությամբ բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Նշված որոշման դեմ 2017 թվականի հունվարի 9-ին պատասխանող Արարատ Խաչատրյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2017 թվականի հունվարի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Նելսոն Մուսայելյանի ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանը և Մարտունու քաղաքապետ Մ. Խաչատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն առերևույթ խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, 43-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների պահանջները, գործել է ԼՂՀ Մահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ կետին հակառակ:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Առաջին ատյանի դատարանի վճիռը, որով Մարտունու համայնքի հայցն ընդդեմ Արարատ Խաչատրյանի՝ ճանապարհից վտարելու մասին, մերժվել է, գործին մասնակցող անձանց կողմից չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ: Վերաքննիչ դատարանը բեկանել է այդ վճիռը՝ Նելսոն Մուսայեյանի վերաքննիչ բողոքի հիման վրա, ով ներկայացել է իբրև վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող գործին մասնակից չդարձված երրորդ անձ: Մինչդեռ սույն գործով կայացված վճիռը որևէ ձևով չի շոշափում և չի կարող շոշափել վերաքննիչ բողոք ներկայացրած անձի ո՛չ իրավունքները և ո՛չ էլ պարտականությունները: Վերաքննության կարգով բողոքարկելով նշված վճիռը՝ բողոքաբերը չի հիմնավորել, թե Առաջին ատյանի դատարանը նյութական և դատավարական իրավունքի ո՞ր նորմն է խախտել, ինչու՞ պետք է ինքը գործին մասնակից դարձվեր և իր ո՞ր իրավունքը կամ պարտականությունն է շոշափվել բողոքարկվող դատական ակտով: Հետևաբար՝ անհիմն է վերաքննիչ բողոք ներկայացրած անձին սույն գործով երրորդ անձ դիտարկելը: Եվ եթե անգամ վեճի առարկա հողատարածքը, որն օրենքով սահմանված կարգով իրեն վարձակալության է տրամադրվել, նախկինում եղել է ճանապարհ ու այն իրեն հատկացնելով խախտվել կամ կարող են խախտվել բողոք բերողի և կամ այլ անձի իրավունքները, ապա այդ անձինք կարող են հայց հարուցել դատարան, այլ ոչ թե մեկ այլ անձի հայցի հիման վրա հարուցված գործին մասնակից դարձվեն ու առանց հայցապահանջ ներկայացնելու իրենց ենթադրյալ իրավունքների պաշտպանություն հայցեն: Այս առումով վերաքննիչ դատարանի որոշմամբ ստացվել է մի այնպիսի իրավական անորոշություն, որի պարագայում անձինք կարող են իրենց ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանություն ակնկալել առանց հայց հարուցելու: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցը ներկայացվել է իրեն այն հողամասից վտարելու մասին, որի վերաբերյալ կատարված է հողամասի վարձակալության իրավունքի պետական գրանցում, որի ուժով պետությունն արդեն իսկ ճանաչել է իր իրավունքները, ուստի գործի էլքի վրա որևէ կերպ չի կարող ազդել այն հանգամանքը, թե ո՞վ է դիմել դատարան, ու մ են ներգրավել գործին կամ ու մ չեն ներգրավել: Պարզ չէ, թե վերաքննիչ դատարանն ի՞նչ է նկատի ունեցել՝ արձանագրելով, որ դատական ակտն այս կամ այն ձևով կարող է շոշափել բողոքաբեր Նելսոն Մուսայեյանի իրավունքներն ու պարտականությունները՝ այն դեպքում, երբ գործի հանգամանքներից հետևում է, որ սույն գործով Նելսոն Մուսայեյանին մասնակից դարձնելն անհեթեթություն կլիներ, ու նա չունի վերաքննիչ բողոք բերելու իրավունք:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումը և օրինական ուժի մեջ թողնել Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի ապրիլի 30-ի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքին Նելսոն Մուսայեյանի ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է: Վերաքննիչ դատարանի որոշումը լրիվությամբ հիմնավոր է:

Արարատ Խաչատրյանն ապօրինի ցանկապատել է համայնքային սեփականություն հանդիսացող ճանապարհահատվածը՝ Նելսոն Մուսայեյանին գրկելով թրթուրավոր տրակտորներն իր հողատարածքները տեղափոխելու ու դրանք մշակելու հնարավորությունից: Այդ կապակցությամբ Նելսոն Մուսայեյանը բազմիցս դիմել է Մարտունու քաղաքապետարան ու նրա դիմումի հիման վրա համայնքը հայց է ներկայացրել դատարան Արարատ

Խաչատրյանին ճանապարհից վտարելու համար: Հետևաբար՝ Առաջին ատյանի դատարանը Նելսոն Մուսայեյանին պետք է գործով ներգրավեր որպես ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, ինչը, սակայն չի արվել, գործը քննվել է Նելսոն Մուսայեյանի բացակայությամբ ու նրա իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, որով իսկ խախտվել են ԼՂՀ Սահմանադրության 44-րդ և 45-րդ հոդվածներում ամրագրված նրա իրավունքները:

4. Վճռաբեկ բողոքին Մարտունու քաղաքային համայնքի ղեկավար Ս.Խաչատրյանի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ ճիշտ:

2013 թվականի վերջերին Նելսոն Մուսայեյանը, դիմելով Մարտունու քաղաքապետարան, հայտնել է, որ Մարտունու համայնքի «Կարվին» թաղամասի բնակիչ Արարատ Խաչատրյանն ապօրինի ցանկապատել է հիմնականում իր կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող դաշտամիջյան ճանապարհը՝ իրեն զրկելով թրթուրավոր տրակտորները տեղափոխելու ու իր հողատարածքները մշակելու հնարավորությունից, որի պատճառով էլ հրաժարվել է հողամասի օգտագործման դիմաց վարձավճարները մուծելուց, ինչն էլ իրենց կողմից հայց հարուցելու առիթ է հանդիսացել: Քանի որ Նելսոն Մուսայեյանն է դիմել քաղաքապետարան իր խախտված իրավունքները վերականգնելու համար, ուստի Առաջին ատյանի դատարանը պետք է սույն գործին նրան ներգրավեր որպես երրորդ անձ, ինչը, սակայն, չի արվել. գործը քննվել է առանց Նելսոն Մուսայեյանի մասնակցության ու նրա իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ կայացվել գործն ըստ էության լուծող սխալ դատական ակտ: Ներկայումս էլ Արարատ Խաչատրյանը շարունակում է իր հակաօրինական գործողությունները. ինքնակամ գավթել է 2900 քառ. մետր հողատարածք:

5. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. ԼՂՀ Մարտունու շրջանի Մարտունու համայնքի ղեկավար Մհեր Խաչատրյանի և Արարատ Խաչատրյանի միջև 13.10.2013թ. կնքված պայմանագրի համաձայն՝ Մարտունու համայնքի «Կարվին» տեղամասում Արարատ Խաչատրյանին գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով 25 տարի ժամկետով վարձակալության է հանձնվել 0,5391 հա վարելահող, ինչի հիման վրա 05.11.2013թ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 1-23 մատյանի 157343 համարի տակ կատարվել է նշված անշարժ գույքի նկատմամբ Արարատ Խաչատրյանի իրավունքների պետական գրանցում ու տրվել վկայական /գ.թ. 11-14/:

2. Հայց հարուցելով դատարան՝ Մարտունու շրջանի Մարտունու համայնքի ղեկավար Մհեր Խաչատրյանը պահանջել է Արարատ Խաչատրյանին վտարել «համայնքային սեփականություն հանդիսացող ճանապարհահատվածից», պատճառաբանելով նրանով, որ պատասխանողն իր վարձակալած հողատարածքին ապօրինի միացրել ու ցանկապատել է համայնքային սեփականություն հանդիսացող ճանապարհին ազատելու մասին իրենց բազմիցս գրավոր և բանավոր զգուշացումներից հետո ցանկապատը քանդել-փռել է նույն ճանապարհահատվածում, ինչով խախտվում են համայնքի՝ համայնքային սեփականություն հանդիսացող ճանապարհին իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքները:

3. Առաջին ատյանի դատարանի վճռով հայցը մերժվել է այն հիմնավորմամբ, որ պատասխանող Արարատ Խաչատրյանը չի զավթել և ապօրինի չի օգտագործում վեճի առարկա հանդիսացող հողատարածքը, որ հայցադիմումում նշված 5 մետր լայնությամբ հողատարածքը ներառվում է պատասխանողին վարձակալության իրավունքով տրամադրված տարածքի մեջ:

4. Կողմերը նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում չեն բողոքարկել:

5. Նելսոն Մուսայելյանը սույն գործով հայց չի հարուցել:

6. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու ու դատական սխալի առկայության հանգամանքներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Նրանք օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները: Նույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել հայցվորի կամ պատասխանողի կողմում մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը, եթե գործով կայացվող վճիռը կարող է ազդել կողմերից մեկի հանդեպ նրանց ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա, իսկ 2-րդ կետի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք օգտվում են կողմի իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, բացի հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու, հայցից հրաժարվելու, հայցն ընդունելու կամ հաշտության համաձայնություն կնքելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ երրորդ անձինք դատական քննության առարկա հանդիսացող վիճելի իրավահարաբերության հետ կապված նյութական իրավահարաբերությունների ենթադրյալ սուբյեկտներ են, որոնք կողմերի իրավունքների ու օրինական շահերի հետ չհամընկնող իրենց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով մտնում են արդեն իսկ սկսված վարույթի մեջ, քանի որ կայացվող վճիռը շոշափում է կամ հետագայում կարող է շոշափել նրանց իրավունքներն ու օրինական շահերը:

Ընդ որում, հայց ներկայացնելով ընդդեմ երկու կողմերի կամ միայն հայցվորի դեմ, երրորդ անձն ըստ էության հավակնություն է ներկայացնում վեճի առարկայի /վեճի օբյեկտի/ նկատմամբ: Երրորդ անձի վեճի առարկան /վեճի օբյեկտը/ և սկզբնական վեճի առարկան նույնն են կամ համընկնում են մասնակիորեն: Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձանց նյութաիրավական շահագրգռվածությունը գործի ելքում ուղղակի է:

Ինչ վերաբերում է վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց, ապա գործի ելքում նրանց նյութաիրավական շահագրգռվածությունն անուղղակի է. դատարանի վճիռը նրանց վրա անմիջականորեն չի ներգործում, նրանց իրավունքների կամ պարտականությունների վրա այն կարող է ազդել հետագայում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք, դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում, գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Սույն գործով Մարտունու համայնքի ներկայացրած հայցի առարկան հողատարածքից վտարելու /հողատարածքն ազատելու/ պահանջն է, հայցի հիմքը՝ հողատարածքը համայնքային սեփականություն հանդիսացող ճանապարհի հանդիսանալու և պատասխանող Արարատ Խաչատրյանի կողմից ապօրինի տիրապետելու փաստերը:

Առաջին ատյանի դատարանում գործի քննության արդյունքում վերոնշյալ փաստերը հերքվել են. հաստատվել է, որ վեճի առարկա /վեճի օբյեկտ/ հանդիսացող 5 մետր լայնությամբ և 106 մետր երկարությամբ հողատարածքը ներառված է Արարատ Խաչատրյանին վարձակալությամբ հատկացված հողատարածքի մեջ, վերջինս այն չի զավթել և ապօրինի չի տիրապետում:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Նելսոն Մուսայեյանի վերաքննիչ բողոքը, բեկանել է Առաջին ատյանի դատարանի վճիռը ու գործն ուղարկել նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության այն պատճառաբանությամբ, որ համայնքի՝ ընդդեմ Արարատ Խաչատրյանի ներկայացրած հայցի քննության արդյունքում կայացված վճիռը «այս կամ այն ձևով կարող է շոշափել բողոքաբեր Նելսոն Մուսայեյանի իրավունքներն ու պարտականությունները», որ Նելսոն Մուսայեյանին մասնակից չդարձնելով Առաջին ատյանի դատարանը խախտել է վերջինիս արդար դատաքննության իրավունքը՝ երաշխավորված ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասով:

Մինչդեռ Նելսոն Մուսայեյանը սույն գործով հայց չի ներկայացրել ու նրա իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ վճիռ չի կայացվել: Ապացույցներ այն մասին, որ սույն գործով վեճի առարկա հանդիսացող հողատարածքի նկատմամբ Նելսոն Մուսայեյանն ունի որևէ իրավունք, որ վճիռը վերաբերում է նրա իրավունքներին, չեն ներկայացվել: Ավելին, ըստ գործի փաստերի՝ այդ հողատարածքի նկատմամբ Արարատ Խաչատրյանն ունի իրավունք, նրա տիրապետումն ապօրինի չէ, ինչի պատճառով էլ մերժվել է հայցը: Սույն գործով կայացված վճիռը որևէ կերպ չի կարող ազդել նաև հողատարածքի վարձակալության՝ Նելսոն Մուսայեյանի ու համայնքի միջև առկա հարաբերություններից բխող պարտավորությունների վրա, դրանք որևէ կապ չունեն սույն գործով դատավարության առարկա հանդիսացած իրավահարաբերության հետ: Հետևաբար՝ հիմնավոր է վճռաբեկ բողոքի հիմքն այն մասին, որ Վերաքննիչ դատարանն անհիմն է Նելսոն Մուսայեյանին ճանաչել սույն գործով երրորդ անձ ու նրա բողոքով բեկանել ստորադաս դատարանի օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտը:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին համահունչ սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, համաձայն որի՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մաս է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է *res judicata* /«լուծված գործ»/ սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որպեսզի կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և կատարման համար պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով /տես, օրինակ, Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի, Նելյուբինն ընդդեմ Ռուսաստանի գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.07.2003թ. և 02.11.2006թ. վճիռները/:

Այսպիսով, սույն գործով վճռաբեկ բողոքի հիմքը բավարար է՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների

ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը:

Գերագույն դատարանը միևնույն ժամանակ արձանագրում է, որ սույն գործով կայացված վճիռը Նելսոն Մուսայեյանին չի գրկում ընդհանուր կարգով իր իրավունքների պաշտպանության հայց հարուցելու իրավունքից:

7. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը բաղկացած են պետական տուրքից, որը վճարվել է բողոքաբեր Արարատ Խաչատրյանի կողմից: Քանի որ բողոքը ենթակա է բավարարման, հետևաբար՝ վճռաբեկ բողոքի համար մուծված պետական տուրքի գումարը ենթակա է գանձման հոգուտ Արարատ Խաչատրյանի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 6-րդ կետով և 256-րդ հոդվածով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի ապրիլի 30-ի վճիռին:

2. ԼՂՀ Մարտունու քաղաքապետարանից հոգուտ Արարատ Բահատուրի Խաչատրյանի բռնագանձել 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԲԴ 2389/02/16թ.
Քաղաքացիական գործ ԸԲԴ 2389/02/16թ.
Նախագահող դատավոր՝ Հ. Խաչատրյան
Դատավորներ՝ Հ. Աբրահամյան
Ն. Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 27-ին փետրվարի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/ վճռաբեկության կարգով.

նախագահող դատավոր Ա. Աբրահամյանի
դատավորներ՝ Գ. Գրիգորյանի
Ա. Հայրապետյանի

դրնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի «Արցախբանկ» ՓԲԸ ընդդեմ Սամվել Հենրիխի Հայրապետյանի և Սիմոն Հենրիխի Հայրապետյանի՝ համապարտության կարգով գումար գանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունվարի 19-ի որոշման դեմ հայցվոր «Արցախբանկ» ՓԲԸ ներկայացուցիչ Տիգրան Ավետիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Արցախբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ նաև Հայցվոր/ հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ նաև Դատարան/ ընդդեմ Սամվել և Սիմոն Հայրապետյանների /այսուհետ՝ նաև Պատասխանողների/ 10.592,66 /տաս հազար հինգ հարյուր իննսուներկու ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար՝ որպես թիվ MGU-170 քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման պայմանագրից /այսուհետ՝ Պայմանագիր/ առաջացած պարտավորության գումար, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված տոկոսներն ու տույժերը 2016թ. հոկտեմբերի 21-ից մինչև պարտավորության դադարման օրը համապարտության կարգով գանձելու պահանջով:

Դատարանը 2016թ. նոյեմբերի 28-ի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն:

Պատասխանողներից հօգուտ Հայցվորի համապարտության կարգով գանձել է 9.583 /ինը հազար հինգ հարյուր ութսուներեք/ ԱՄՆ դոլար, որից 7.400,62 /յոթ հազար չորս հարյուր ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար՝ որպես վարկի նկատմամբ հաշվարկված տոկոսներ, 2.042,57 /երկու հազար քառասուներկու ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար՝ որպես ժամկետանց վարկի նկատմամբ հաշվարկված տույժ, 30,04 /երեսուն ամբողջ չորս հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար՝ տոկոսների նկատմամբ հաշվարկված տույժ և Պայմանագրի 4.1 և 4.2 կետերով հաշվարկվող տույժերը՝ սկսած 2016թ. հոկտեմբերի 22-ից մինչև պարտավորության դադարման օրը:

Հայցվորի ներկայացուցիչ Տ.Ավետիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2017թ. հունվարի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Դատարանի 2016թ. նոյեմբերի 28-ի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ վճարեկ բողոք է ներկայացրել Հայցվորի ներկայացուցիչ Տ.Ավետիսյանը:

Վճարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի հետևանքով գործում առկա ապացույցները՝ թիվ MGU-170 «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման պայմանագիրը» և թիվ MGU-170/1 «Երաշխավորության պայմանագիրը» բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի վերլուծել և պատշաճ իրավական գնահատական չի տվել՝ արդյունքում կայացնելով ակնհայտ սխալ որոշում:

Բողոքաբերն իր փաստարկները պատճառաբանել է նրանով, որ Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել Դատարանի կողմից տոկոսագումարների և երաշխավորից ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվեգրված 1.119,43 /հազար հարյուր տասնինն ամբողջ քառասուներեք հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար և պայմանագրի համաձայն մինչև պարտավորության կատարումը 18% տոկոսագումարները գանձելու վերաբերյալ պահանջները մերժելը:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ վարկային պայմանագրի գործողության ժամկետը չի ավարտվել 2014թ. դեկտեմբերի 28-ին, այլ ըստ «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ MGU-170 պայմանագրի 5.1 կետի՝ այն գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

Ըստ բողոք բերողի՝ ստորադաս դատարանները, մերժելով Բանկի պահանջը մինչև պարտավորության փաստացի մարումը «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ MGU-170 պայմանագրի 1.4 կետով սահմանված 18% Պատասխանողներից գանձելու, ինչպես նաև արդեն իսկ հաշվեգրված 1.119,43 /հազար հարյուր տասնինն ամբողջ քառասուներեք հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար գումարից, բավարարելով 109.77 /հարյուր ինն ամբողջ, յոթանասուկոթ հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար, հիմնավորել են այն հանգամանքով, որ պայմանագրի գործողության ժամկետի լրանալուց հետո վարկի գումարի նկատմամբ տոկոսներ հաշվարկելու և վճարելու վերաբերյալ պայման պայմանագրով և օրենքով նախատեսված չէ:

Բողոք բերող անձը գտնում է, որ դատարանները հանգել են սխալ եզրահանգման: Բանկը նման պահանջ ներկայացրել է, հիմք ընդունելով Բանկի և Քարտապանի միջև կնքված «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ MGU-170 պայմանագրի 5.1 կետը, որի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը: Մինչդեռ, Դատարանն անտեսել է նշված կետը, որը վերաբերում է պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունների կատարմանը, այդ թվում նաև 18% տոկոսադրույքով տոկոսներ վճարելուն:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել 2016թ. օգոստոսի 11-ի ԸԻԴ 2433/02/15թ., 2016թ. սեպտեմբերի 20-ի ԸԻԴ 0114/02/15թ., 2016թ. հուլիսի 8-ի ԸԻԴ 2221/02/15թ., 2016թ. հուլիսի 28-ի ԸԻԴ

2195/02/15թ., 2016թ. հուլիսի 27-ի ԸԲԴ 2194/02/15 քաղաքացիական գործերով Գերագույն դատարանի արտահայտած դիրքորոշումները:

Բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունվարի 19-ի որոշումը՝ բավարարելով մինչև պարտավորության փաստացի մարումը վարկի գումարի նկատմամբ վարկային պայմանագրի 1.4 կետով սահմանված 18% չափով տոկոսագումար հաշվեգրելու, գանձելով նաև 1.119,43 /հազար հարյուր տասնինը ամբողջ քառասուներեք հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար տոկոսագումարը և վճարված պետական տուրքի գումարը:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Բանկի և Սամվել Հայրապետյանի միջև 2013թ. նոյեմբերի 20-ին կնքվել է «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ MGU-170 պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ Բանկը քարտապանի հաշվին բացում է վերականգնվող վարկային գիծ՝ 7.405 /յոթ հազար չորս հարյուր հինգ/ ԱՄՆ դոլար գումարի սահմանաչափով, իսկ ըստ 1.4 կետի՝ 18% տարեկան տոկոսադրույքով:

2. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ վարկային գիծը գործում է մինչև 2015թ. սեպտեմբերի 20-ը և մարվում է 2015թ. նոյեմբերի 20-ին:

3. Բանկի, Սամվել Հայրապետյանի և Սիմոն Հայրապետյանի /այսուհետ՝ նաև Երաշխավոր/ միջև 2013թ. նոյեմբերի 20-ին կնքվել է թիվ MGU-170/1 երաշխավորության պայմանագիրը, որով Երաշխավորը պարտավորվել է Բանկի առջև Քարտապանի հետ համապարտ պատասխանատվություն կրել «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ MGU-170 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորության լրիվ կատարման համար:

4. Բանկի ներկայացրած տեղեկանքի համաձայն՝ Քարտապանի պարտավորությունները 2016թ. հոկտեմբերի 21-ի դրությամբ ընդամենը կազմել են 10.529,66 /տաս հազար հինգ հարյուր ինսուներկու ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար, այդ թվում՝ որպես ժամկետանց պարտավորություն՝ 7.400,62 /յոթ հազար չորս հարյուր ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար, տոկոսների գծով՝ 1.119,43 /հազար հարյուր տասնինը ամբողջ քառասուներեք հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար, ընդ որում՝ ժամկետանց տոկոսագումարը՝ 109.77 /հարյուր ինս ամբողջ յոթանասուկոթ հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար, տույժ՝ տոկոսների գծով՝ 30.04 /երեսուն ամբողջ չորս հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար, տույժ՝ վարկի գծով՝ 2.042,57 /երկու հազար քառասուներկու ամբողջ հիսուկոթ հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար:

5. Բանկի և քարտապանի միջև 2013թ. նոյեմբերի 20-ին կնքված «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ MGU-170 պայմանագրի 5.1 կետը սահմանում է, որ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու և դատական սխալի առկայության հանգամանքներով.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքում բարձրացված է հետևյալ իրավական հարցը՝ վարկի գումարի նկատմամբ վարկի մարման վերջնաժամկետի ավարտից հետո մինչև պարտավորության փաստացի մարման օրը տարեկան 18% տոկոսադրույքով տոկոսները Պատասխանողներից գանձման ենթակա են, թե՛ ոչ:

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքներն ու պարտականությունները, որոշելու պայմանագրի օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի պահպանության, հանցագործությունների կանխման, առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Նշված հոդվածը սահմանում է կարևոր քաղաքացիաիրավական սկզբունքի՝ պայմանագրի ազատության հասկացությունը, որն ավելի մանրամասն կարգավորում է ստացել նույն օրենսգրքի 437-րդ հոդվածով: Այդ պատճառով Գերագույն դատարանը պայմանագրի ազատության հարցը քննարկում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածների համատեքստում:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս:

Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է նույն օրենսգրքով, օրենքով կամ կամովին ստանձնած պարտավորությամբ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը /վարկատուն/ պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով ու պայմաններով դրամական միջոցներ /վարկ/ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 47-րդ գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ նույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածը սահմանում է հետևյալը՝
1. Եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը: Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առաջին չէ: 2. Եթե փոխառության պայմանագրով նախատեսված է փոխառությունը վերադարձնել մաս առ մաս /տարածամկետ/, ապա փոխառուի կողմից փոխառության հերթական մասը վերադարձնելու համար որոշված ժամկետը խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի պահանջել վերադարձնելու փոխառության մնացած ամբողջ գումարը՝ հասանելիք տոկոսների հետ միասին:

Նշված իրավանորմերի մեկնաբանությունից հետևում է, որ վարկային հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրության՝ փոխառության ու վարկի վերաբերյալ նորմերով, մինչև ժամանակ, վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ԼՂՀ

քաղաքացիական օրենսգրքի՝ փոխառությանը վերաբերող 47-րդ գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, եթե կողմերն այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին:

Այսինքն՝ վարկային պայմանագրի իրավակարգավորումը փոխառության պայմանագրի նորմերի հիման վրա կատարվում է միայն վարկային պայմանագրի էությանը չհակասող մասով: Ընդ որում, օրենսդիրը, ելնելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 48-րդ գլխի իմպերատիվ նորմերով:

Վերլուծելով շարադրված հոդվածները՝ պարզ է դառնում, որ վարկային հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրության՝ փոխառության ու վարկի մասին նորմերով: Մինևայն ժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ փոխառությանը վերաբերող 47-րդ գլխի կանոնները չեն կիրառվում, եթե կողմերն այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Այսինքն՝ վարկային պայմանագրի իրավակարգավորումը փոխառության պայմանագրի նորմերի հիման վրա կատարվում է միայն վարկային պայմանագրի էությանը չհակասող մասով: Ավելին՝ օրենսդիրը, ելնելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 47-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 48-րդ գլխի իմպերատիվ նորմերով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե այդ հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը:

Վերոգրյալից պարզ հետևում է, որ վարկային պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկման ժամկետի, պարտավորության ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում պատասխանատվության և այլ հարցերը որոշվում են կողմերի միջև կնքված պայմանագրի դրույթների վերլուծության և գնահատման արդյունքում:

Գերագույն դատարանն իր որոշումներում արդեն անդրադարձել է վարկային պայմանագրերում կիրառվող ժամկետների մեկնաբանության և վերլուծության հարցին, սակայն սույն բողոքի շրջանակներում հարկ է համարում կրկին վերահաստատել իր դիրքորոշումը:

Վարկային պայմանագրի գործողության ժամկետը որոշվում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոններով, այն է՝ 1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից: 2. Կողմերն իրավունք ունեն սահմանելու, որ իրենց կնքած պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: 3. Օրենքով կամ պայմանագրով կարող է նախատեսվել, որ

պայմանագրի գործողության ժամկետի ավարտով դադարում են կողմերի պարտավորությունները: Պայմանագիրը, որում բացակայում է նման պայմանը, գործում է մինչև դրանով որոշված պարտավորության կատարման ավարտը: 4. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագիրը խախտելու համար պատասխանատվությունից:

Վարկային պայմանագրի գործողության ժամկետը տարբերվում է վարկի ժամկետից: Վարկի ժամկետը վարկառուի կողմից վարկը ստանալու և այն վերադարձնելու միջև ընկած ժամկետն է, որն իր հերթին կարող է պարունակել առանձին ժամկետներ /վարկի մարման ժամկետներ/:

Իր իրավական բնույթով տոկոսների հաշվարկման ժամկետը վարկատուի՝ տոկոսներ հաշվարկելու իրավունք ունենալու ժամկետն է:

Գերագույն դատարանը պնդում է, որ, ի տարբերություն փոխառության պայմանագրի, վարկային պայմանագրին օրենսդիրն առաջադրել է տոկոսների հաշվարկման պարտադիր պայման, ինչը դրված է հենց վարկային պայմանագրի օրենսդրական բնորոշման հիմքում: Բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը /վարկատուն/ պարտավորվում են պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ /վարկ/ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Վարկառուի կողմից վարկի գումարի նկատմամբ վարկային պայմանագրով սահմանված չափով ու կարգով վճարվող տոկոսները հանդիսանում են վարկի օգտագործման դիմաց վճար /վարկային պարտավորություն/:

Սույն գործի նյութերից հստակ երևում է, որ Բանկի և Քարտապանի միջև 2013թ. նոյեմբերի 20-ին կնքվել է «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ MGU-170 պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ Բանկը քարտապանի հաշվին բացում է վերականգնվող վարկային գիծ՝ 7.405 /ոթ հազար չորս հարյուր հինգ/ ԱՄՆ դոլար գումարի սահմանաչափով, ըստ 1.4 կետի՝ 18% տարեկան տոկոսադրույքով: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ վարկային գիծը գործում է մինչև 2015թ. սեպտեմբերի 20-ը և մարվում 2015թ. նոյեմբերի 20-ին: Նույն պայմանագրի 5.1 կետը սահմանում է, որ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

Վերաքննիչ դատարանը իրավաչափ և հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ «...պայմանագրի ժամկետի ավարտից հետո մինչև 2016թ. հոկտեմբերի 21-ը հաշվարկված 1.009,66 /հազար ինը ամբողջ, վաթսուսվեց հարյուրերորդական/ ԱՄՆ դոլարի չափով և 2016թ. հոկտեմբերի 22-ից մինչև պարտավորության դադարման օրը հաշվարկվելիք տոկոսները գանձելու Բանկի պահանջը հիմնված չէ օրենքի, այլ իրավական ակտերի կամ պայմանագրի վրա»:

Մինչդեռ, Գերագույն դատարանի գնահատմամբ, հաշվի առնելով նախկինում հայտնած դիրքորոշումները սույն հարցի վերաբերյալ, նշված պատճառաբանությունը հիմնավոր չէ և չի բխում վարկային պայմանագրի դրույթներից:

Վերլուծության ենթարկելով վերը շարադրված օրենքների նորմերը՝ Գերագույն դատարանը փաստում է, որ Դատարանի կողմից սխալ է մեկնաբանել և պատշաճ իրավական գնահատման չի արժանացել վարկային պայմանագիրը: Դատարանը պետք է սույն գործով կիրառեր MGU-170 պայմանագրի վերաբերելի և կիրառելի դրույթները, այն է՝ պայմանագրի 5.1 կետը, որի շրջանակներում և պետք է իրավական գնահատման առարկա դարձներ Դատարանի առջև բարձրացրած հարցերը, ինչը, սակայն չի արվել, իսկ Վերաքննիչ դատարանը դա անտեսել է և Դատարանի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Այսպիսով, Գերագույն դատարանի վերը նշված հիմնավորումներով հերքվում են Վերաքննիչ դատարանի իրավական մեկնաբանությունները,

որոնք Գերագույն դատարանի կողմից գնահատման առարկա են դարձել նաև նախկինում՝ /մասնավորապես, տես Գերագույն դատարանի հետևյալ որոշումներում՝ արտահայտած դիրքորոշումները՝ 2016թ. օգոստոսի 11-ի ՇԻԴ 2433/02/15թ., 2016թ. հուլիսի 8-ի ՇԻԴ 2221/02/15թ., 2016թ. հուլիսի 28-ի ՇԻԴ 2195/02/15թ., 2016թ. հուլիսի 27-ի ՇԻԴ 2194/02/15թ./:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե այդ հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի ա/ և բ/ ենթակետերի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի ապացուցման ենթակա փաստերը՝ շարադրելով ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստը, առաջին ատյանի դատարանի եզրակացությունը՝ տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը՝ նույն օրենսգրքի 47-րդ և 49-րդ հոդվածներին համապատասխան:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ինչ վերաբերում է բողոքաբերի պահանջվող 1.119,43 /հազար հարյուր տասնինը ամբողջ քառասուներեք հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար կազմող գումարին, ապա Գերագույն դատարանը փաստում է, որ գումարի մասով բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն՝ 1.009,66 /հազար ինն ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար գումարի չափով, քանի որ Դատարանը բավարարել է հայցապահանջը տոկոսների մասով՝ 109.77 /հարյուր ինն ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար գումարի չափով և այդ մասով դատական ակտն օրինական ուժի մեջ է թողնվում:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ գործի նյութերը թույլ են տալիս կայացնելու որոշում՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում կիրառելու ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 4-րդ կետը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանը փաստում է.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններով:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են պետական տուրքից:

Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի պատասխանողներից համապարտության կարգով ենթակա է գանձման 8.670 /ութ հազար վեց հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի, 14.556 /տասնչորս հազար հինգ հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ որպես վերաքննիչ բողոքի և 154.508 /հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր ութ/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016թ. նոյեմբերի 28-ի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունվարի 19-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել: Բողոքարկված մասով հայցը բավարարել:

Սամվել Հենրիխի Հայրապետյանից և Սիմոն Հենրիխի Հայրապետյանից հոգուտ «Արցախբանկ» ՓԲԸ համապարտության կարգով բռնագանձել 1.009,66 /հազար ինն ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական/ ԱՄՆ դոլար հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ MGU-170 պայմանագրի 4.1 կետով սահմանված վարկի գումարի նկատմամբ 18% չափով տոկոսագումարի 16.2% տարեկան փաստացի տոկոսադրույքով հաշվեգրվելիք տոկոսները, սկսած 2016թ. հոկտեմբերի 22-ից մինչև պարտավորության լրիվ մարման օրը:

Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Սամվել Հենրիխի Հայրապետյանից և Սիմոն Հենրիխի Հայրապետյանից՝ հոգուտ «Արցախբանկ» ՓԲԸ համապարտության կարգով բռնագանձել 177.734 /հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր երեսունչորս/ՀՀ դրամ որպես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն
ստորագրություն

Ա.ԱԲԴԱՀԱՍՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա.ՀԱՅՐԱՂԵՏՅԱՆ

ԼԵՈՒՍՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

քաղաքացիական գործով ԸԻԴ 2389/02/16թ.

Դատավոր՝ Ա.Հայրապետյան

27 փետրվարի 2017թ.

ք.Ստեփանակերտ

Ծանոթանալով ԸԻԴ 2389/02/16թ. քաղաքացիական գործի նյութերին և հայցվոր՝ «Արցախբանկ» ՓԲԸ ներկայացուցիչ Տիգրան Ավետիսյանի վճռաբեկ բողոքին, ԼՂՀ Գերագույն դատարանի մեծամասնությամբ /դատավորներ Ա.Աբրահամյան և Գ.Գրիգորյան/ կայացրած որոշման հետ համաձայն չլինելու պատճառով՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան շարադրում եմ իմ հատուկ կարծիքը:

Գործի դատավարական նախապատմությունը հետևյալն է.

2016թ. հոկտեմբերի 21-ին «Արցախբանկ» ՓԲԸ ներկայացուցիչ Տիգրան Ավետիսյանը հայց է հարուցել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Սամվել և Սիմոն Հայրապետյանների՝ խնդրելով պատասխանողներից համապարտության կարգով հօգուտ հայցվորի բռնագանձել 10.592,66 ԱՄՆ դոլար, որպես 21.10.2016թ. դրությամբ բանկի հանդեպ ունեցած պարտավորություններ, որից 7.400,62 ԱՄՆ դոլար՝ վարկի գծով ժամկետանց պարտավորություն, 1.119,43 ԱՄՆ դոլար՝ տոկոսներ /որից 109,77 ԱՄՆ դոլարը ժամկետանց տոկոսներ/, 30,04 ԱՄՆ դոլար՝ տույժ տոկոսների գծով, 2.042,57 ԱՄՆ դոլար՝ տույժ վարկի գծով: Միաժամանակ խնդրել է պատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել նախապես մուծված պետական տուրքի գումարը, ինչպես նաև տոկոսներ և տույժեր՝ հիմք ընդունելով վարկային պայմանագրի 1.4-րդ, 4.1-րդ և 4.2-րդ կետերը:

2016թ. նոյեմբերի 28-ի վճռով Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակիորեն՝ 9.583 ԱՄՆ դոլարի չափով, որից 7.400,62 ԱՄՆ դոլար՝ որպես վարկի գումար, 109,77 ԱՄՆ դոլար՝ որպես վարկի նկատմամբ հաշվարկված տոկոսներ, 2.042,57 ԱՄՆ դոլար՝ որպես ժամկետանց վարկի նկատմամբ հաշվարկված տույժ, 30,04 ԱՄՆ դոլար՝ տոկոսների նկատմամբ հաշվարկված տույժ: Վճռվել է նաև պատասխանողներից համապարտության կարգով գանձել պայմանագրի 4.1-րդ և 4.2-րդ կետերով հաշվարկվող տույժերը՝ սկսած 2016թ. հոկտեմբերի 22-ից մինչև պարտավորության դադարման օրը:

2016թ. դեկտեմբերի 2-ին «Արցախբանկ» ՓԲԸ ներկայացուցիչ Տիգրան Ավետիսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել, խնդրելով մասնակիորեն բեկանել և փոփոխել վճիռը՝ բավարարելով մինչև պարտավորության փաստացի մարումը վարկի գումարի նկատմամբ վարկային պայմանագրի 1.4-րդ կետով սահմանված 18%-ի չափով տոկոսագումար հաշվեգրելու և 1.119,43 ԱՄՆ դոլար տոկոսագումարները գանձելու պահանջները:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունվարի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Առաջին ատյանի դատարանի 2016թ. նոյեմբերի 28-ի վճիռը թողնվել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել հայցվոր՝ «Արցախբանկ» ՓԲԸ ներկայացուցիչ Տիգրան Ավետիսյանը, խնդրելով բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ բավարարելով մինչև պարտավորության փաստացի մարումը վարկի գումարի նկատմամբ վարկային պայմանագրի 1.4-րդ կետով սահմանված 18%-ի չափով տոկոսագումար հաշվեգրելու, 1.119,43 ԱՄՆ դոլար տոկոսագումարները ևս գանձելու, ինչպես նաև չբավարարված չափով պետական տուրքի գումարը բռնագանձելու պահանջները:

ԼՂՀ Գերագույն դատարանը 2017թ. փետրվարի 27-ին դատավորների մեծամասնությամբ որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու մասին: Բեկանվել և փոփոխվել է ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունվարի 19-ի որոշումը: Բողոքարկված մասով հայցը բավարարվել է:

Դատական նիստում հետազոտված ապացույցներով հաստատված են հետևյալ փաստական հանգամանքները.

Դատական նիստում հետազոտված թիվ MGU-170 քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման պայմանագրից դիտվում է, որ 2013թ. նոյեմբերի 20-ին «Արցախբանկ» ՓԲԸ-ն և Սամվել Հենրիխի Հայրապետյանը /վարկառու/ կնքել են պայմանագիր, որի համաձայն վարկառուի հաշվին բացվել է 7.405 ԱՄՆ դոլար գումարի վերականգնվող վարկային գիծ: Վարկային գիծը գործում է մինչև 20.09.2015թ. և մարվում 20.11.2015թ.: Պայմանագրի 1.4-րդ կետի համաձայն՝ վարկային գծի շրջանակներում վարկառուի կողմից օգտագործված միջոցների նկատմամբ հաշվարկվում է 18%-ի չափով տոկոսագումար 16,62% տարեկան փաստացի տոկոսադրույքով: Պայմանագրի 4.1-րդ կետի համաձայն՝ վարկի գումարը սահմանված ժամկետում չմարելու դեպքում վարկառուն յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0,1%-ի չափով: Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

Միմոն Հենրիխի Հայրապետյանը հանդիսանում է նշված պայմանագրով պարտապանի կողմից ստանձնած պարտավորությունների երաշխավոր:

Հատուկ կարծիքի հիմնավորումները հետևյալն են.

Սույն գործով ներկայացրած հայցն Առաջին ատյանի դատարանը բավարարել է մասնակիորեն այն պատճառաբանությամբ, որ վարկային գծի տրամադրման պայմանագրի ժամկետի ավարտից հետո 18% դրույքաչափով տոկոսներ վճարելու պարտավորություն նախատեսված չէ, իսկ պայմանագրի ժամկետի ավարտի օր է համարել 2015թ. նոյեմբերի 20-ը՝ պայմանագրի 1.2-րդ կետով նախատեսված՝ վարկային գծի մարման ժամկետը:

Վերաքննիչ դատարանը բողոքը մերժելով՝ իրավաչափ և հիմնավոր է համարել Առաջին ատյանի դատարանի հաստատած այն փաստերը, ըստ որոնց՝ վարկի գումարի, դրա դիմաց մինչև պայմանագրի ժամկետի ավարտը (20.11.2015թ.) հաշվարկված 109,77 ԱՄՆ դոլարի չափով տոկոսների, ինչպես նաև տույժերի գանձման մասին բանկի պահանջը բխում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին, 411-րդ հոդվածի 1-ին կետերից, պայմանագրի 1.4-րդ, 4.1-րդ և 4.2-րդ կետերից, իսկ պայմանագրի ժամկետի ավարտից հետո մինչև 2016թ. հոկտեմբերի 21-ը հաշվարկված 1.009,66 ԱՄՆ դոլարի չափով և 2016թ. հոկտեմբերի 22-ից մինչև պարտավորության դադարման օրը հաշվարկվելիք տոկոսները գանձելու բանկի պահանջը հիմնված չէ օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի վրա:

Այսպիսով, ստորադաս դատարանները պայմանագրի ժամկետի ավարտի օր /պայմանագրի 1.4-րդ կետով սահմանված տոկոսագումարի վճարման ժամկետ/ են համարել պայմանագրի 1.2-րդ կետով նախատեսված վարկային գծի մարման ժամկետը, որից հետո վճարման ենթակա են համարել մինչ այդ առաջացած պարտավորությունները և միայն պայմանագրով նախատեսված տուժանքները:

Գերագույն դատարանն անհիմն է համարել վերը նշված եզրահանգումը և հիմք ընդունելով պայմանագրի 5.1-րդ կետը, արձանագրել է, որ պայմանագրի ժամկետն ավարտվում է պարտավորությունների ամբողջական կատարման օրը: Արդյունքում, Գերագույն դատարանի որոշմամբ «Արցախբանկ» ՓԲԸ-ի հայցը ընդդեմ Սամվել Հայրապետյանի և Միմոն Հայրապետյանի լրիվությամբ բավարարվել է:

Չանդրադառնալ սույն գործով քննարկվող վարկային գծի տրամադրման պայմանագրի ժամկետի ավարտման հարցին, այդուհանդերձ գտնում եմ, որ ստեղծված հանգամանքներում, երբ սահմանվում է վարկառուի պարտականությունը տույժերի հետ մեկտեղ շարունակել վճարել պայմանագրի 1.4-րդ կետով սահմանված 18%-ի չափով տոկոսագումարը, անհրաժեշտություն է առաջանում քննարկել վճարման ենթակա տուժանքների անհամաչափության հարցը՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածին համապատասխան:

Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանում սույն գործով դատական ակտ կայացնելիս նշված հարցը չէր առաջացել և չէր էլ քննարկվել, ուստի գտնում եմ, որ

վճարել բողոքը մասնակիորեն բավարարելով, քաղաքացիական գործը ենթակա էր ուղարկման Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն: Նշված հոդվածից հետևում է, որ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը և տուժանքը պակասեցնելու դատարանի իրավունքը կոչված է կանխելու իրավունքների իրականացման չարաշահումը: Ու չնայած տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն նաև դատարանի պարտականությունն է, քանի որ հարցը վերաբերվում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա էր գործի նոր քննության անհրաժեշտություն, որի ընթացքում դատարանը պետք է քննության առարկա դարձներ վարկառու Մամվել Հայրապետյանի վարկային պարտավորությունների խախտման պայմաններում հաշվարկված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների համաչափությունը:

**ԼՂՀ Գերագույն
դատարանի դատավոր**

ստորագրություն

Ա.Հայրապետյան